

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

<https://doi.org/10.59546/18290744-2024.10-12-48>

ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ

*«Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական
գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան,
«Գլաձոր» համալսարանի հայցորդ*

INGA AVAGYAN

*“Private Legal Center” Law Firm, Founding Director, Advocate,
Applicant at “Gladzor” University*

ИНГА АВАГЯН

*Учредитель и директор юридической фирмы
«Частный юридический центр», адвокат,
Соискатель университета «Гладзор»*

**ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՊԱՑՈՒՑՄԱՆԸ**

**PARTICIPATION OF THE DEFENSE ATTORNEY IN THE EVIDENCE
CONDUCTED AT THE STAGE OF PRELIMINARY INVESTIGATION**

**УЧАСТИЕ ЗАЩИТНИКА В ДОКАЗЫВАНИИ, ПРОВОДИМОМ НА
СТАДИИ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ**

Ներածություն

Նախաքննությունը սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից և ավարտվում քրեական վարույթը դատարան ուղարկելով կամ այն կարճելով: Նախաքննության բովանդակությունը մինչդատական վարույթի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումն է և որոշումների ընդունումը:

Նախաքննություն կատարելու բացառիկ լիազորությունը պատկանում է քննիչին, որով նա իրականացնում է իր քննության գործառույթը, մինչդեռ քրեական վարույթով ներգրավված պաշտպանը նախաքննության փուլում իրականացվող ապացուցման գործառույթին ունի մասնակցության իրավունք, որը սահմանվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածով, այն է՝ փաստաբանը մեղադրյալի պաշտպանությունը ստանձնում է՝ 1) մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, ինչպես նաև այլ անձանց

հրավերով՝ մեղադրյալի հետագա գրավոր համաձայնությամբ, 2) ՀՀ փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ վարույթն իրականացնող մարմնի գրավոր պահանջի հիման վրա: Փաստաբանը քրեական վարույթով ստանձնելով՝ մեղադրյալի պաշտպանությունը ձեռք է բերում իրավունքներ և պարտականություններ, որով նպատակ է ունենում պարզելու մեղադրանքը հերքող, մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պաշտպանելու մեղադրյալի իրավունքները և իրավաչափ շահերը (ՔԴՕ, հոդված 49):

Քրեական դատավարության սկզբունքներից է կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքը (հոդված 21): Քրեական դատավարության մրցակցային բնույթը ենթադրում է նաև այդ սկզբունքի առանձին տարրերի ներմուծումն ու կիրառումը մինչդատական վարույթում՝ նախաքննության ընթացքում: Գործող իրավակիրառ համակարգը քրեադատավարական օրենսդրության զարգացման ներկայիս փուլում թույլ չի տալիս մինչդատական վարույթում լիարժեք մրցակցություն ապահովել, սակայն առկա անհավասարությունը կարող է էապես մեղմվել մեղադրյալի և պաշտպանի որոշ իրավունքներ ընդլայնելու միջոցով: Միաժամանակ այս փուլում մրցակցության լրացուցիչ տարրերի ներմուծումն արդարացված է այնքանով, որքանով դա բացասաբար չի անդրադառնա վարույթի արդարացի քննության վրա և չի հանգեցնի չարաշահումների:

Հոդվածում հեղինակը նոր քրեական դատավարության օրենսգրքի լույսի ներքո, գիտական աշխատությունների և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա փորձ է արել համեմատական վերլուծության ենթարկել տեսության մեջ առկա իրավական հիմնավորումների և պրակտիկայում տարածված մոտեցումների միջև:

Հիմնական հետազոտություն

Քրեական վարույթում մեղադրյալի հայտնվելու պահից պաշտպանի պարտադիր մասնակցությունն է, ինչպես նաև պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի շրջանակի ընդլայնումը և այն ոչ սպառիչ դարձնելը: Քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, քանի դեռ մեղադրյալը նրանից չի հրաժարվել օրենքով սահմանված կարգով:

Օրենքով քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր դարձնող հիմքերից թեկուզև մեկի առկայության դեպքում պաշտպանից հրաժարումը չի ընդունվում և գործում է մեղադրյալի պաշտպանության սուբյեկտիվ իրավունքի իրականացման կանոնը:

Մրցակցային դատավարության դեպքում քրեական վարույթի հանրային մասնակիցների և առերևույթ հանցագործության մեջ մեղադրվող անձի, նրա պաշտպանի փոխհարաբերությունները կառուցված են դատավարական իրավահավասարության սկզբունքի հիման վրա, որտեղ մասնավորապես առկա է քրեական վարույթի հանրային մասնակիցների և մեղադրյալի (պաշտպանի) միջև դատավարական գործառույթների հստակ տարանջատում, ինչը նշանակում է, որ վարույթի հանրային մասնակիցներն իրականացնում են մեղադրական գործառույթ՝ հավաքելով առավելապես մեղադրական ապացույցներ: Վարույթի հանրային մասնակիցները չեն իրականացնում մեղադրյալին և պաշտպանին հատուկ այնպիսի գործողություն, ինչպիսին պաշտպանական ապացույցներ հավաքելն է: Մյուս կողմից, պաշտպանական ապացույցներ հավաքելու գործառույթը վերապահված է մեղադրյալին և նրա պաշտպանին՝ նրանց միևնույն ժամանակ հնարավորություն տալով համապատասխան իրավական եղանակներով հավաքելու նման ապացույցներ:

Նախաքննության փուլում մրցակցության ընդլայնմանն ուղղված քայլերից մեկը ապացուցողական զանգվածի ձևավորման գործընթացում պաշտպանին լրացուցիչ իրավունքների

վերապահումն է: Մասնավորապես, պաշտպանը պետք է անվերապահորեն իրավունք ունենա մասնակցել 1) իր միջնորդությամբ կատարվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, 2) իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող քննչական և այլ դատավարական գործողություններին, 3) իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող քննչական և այլ դատավարական գործողություններին: Նույն կանոնները պետք է գործեն նաև մեղադրյալի մասնակցությամբ կամ պաշտպանի միջնորդությամբ կատարվող փորձաքննությունների դեպքում:

Մինչդատական վարույթում մեղադրյալի իրավունքների ընդլայնումը ենթադրում է, որ ձերբակալված կամ կալանավորված մեղադրյալը պետք է անվճար բժշկական հետազոտություն անցնելու և եզրակացություն ստանալու իրավունք ունենա: Բացի դրանից՝ նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալուց հետո մեղադրյալը և/կամ նրա պաշտպանը պետք է իրավունք ունենան միջնորդություն ներկայացնել մեղադրյալի դեմ ցուցմունք տված դատավարության սուբյեկտին հարցեր տալու քննչական գործողություն կատարելու վերաբերյալ, ինչով կապահովվի նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքի իրացումը:

Հիմնվելով պաշտպանի կողմից վարույթն իրականացնող մարմնին տրամադրված դատավարական տեղեկատվության օրինականության կանխավարկածի վրա՝ նրա ներկայացրած նյութերը համարվում են թույլատրելի ապացույց, քանի դեռ վարույթն իրականացնող մարմինը չի ապացուցել հակառակը: Ընդ որում, պաշտպանի ներկայացրած փաստաթղթերը կամ առարկաները բոլոր դեպքերում պետք է մնան քրեական գործի նյութերում՝ անկախ դրանց նկատմամբ վարույթն իրականացնող մարմնի վերաբերմունքից: Դրա հետ մեկտեղ պաշտպանը պահպանում է անձանց հարցման ենթարկելու և փորձագետի կարծիք հարցնելու իրավունքները:

Մինչդատական վարույթում պաշտպանության կողմի իրավունքներից է նաև այն, որ պաշտպանը, ծանոթանալով փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը, կարող է առաջադրել լրացուցիչ հարցեր, որոնք քննիչը պարտադիր պետք է ընդգրկի փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ:

Գիտության մեջ մշտապես քննարկվել է ապացուցման ոլորտում պաշտպանի դերակատարության բարձրացման հարցը, առաջարկներ են ներկայացվել ընդլայնել այն միջոցների ցանկը, որոնց օգնությամբ պաշտպանը կարող է հավաքել ապացուցողական նյութեր: Առանձին հեղինակներ նշում են, որ պաշտպանը պետք է իրավունք ունենա ծանոթանալ դեպքի վայրին, իրականացնել լուսանկարչական, կինո և վիդեո տեսագրություններ, կազմել տեղեկանքի պլաններ և սխեմաներ, օգտագործել այդ նյութերը՝ միջնորդությունները հիմնավորելու համար, մասնավորապես՝ լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու համար¹:

Մեկ այլ դեպքում առաջարկվել է քրեական դատավարության օրենսգրքում հստակ կարգավորել առարկաներ, փաստաթղթեր, տեղեկություններ հավաքելու ոլորտում պաշտպանի լիազորությունները, սահմանել, որ քննիչը, դատախազը կամ դատարանը պարտավոր են քրեական գործին կցել պաշտպանի ներկայացրած տվյալները, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել «Պաշտպանական ապացույցներ» վերտառությամբ նոր գլուխ, որտեղ առանձին կսահմանվեն պաշտպանի կողմից հավաքվող ապացույցների նկատմամբ ներկայացվող պահանջները և դատավարական ձևերը՝ «մասնագետի եզրակացություն»

¹ Милова И. Е., Участие адвоката-защитника в собирании доказательств на предварительном следствии, Автореф дисс канд.юрид.наук., Самара, 1998.

նր», «հարցում անցկացնելը», «առարկաներ ստանալը», «տեղեկություններ պահանջելը»²:

Առանձին գիտնականներ նշում են, որ առարկաներ և փաստաթղթեր ներկայացնելն ինքնուրույն դատավարական գործողություն է, որն ունի հստակ իրավական կարգավորման անհրաժեշտություն և պետք է իր ամրագրումը գտնի քրեական դատավարության օրենսգրքում: Մինչդեռ տական վարույթում պաշտպանի և քրեական դատավարության այլ մասնակիցների կողմից ներկայացվող առարկայի և փաստաթղթի փոխանցման դատավարական ձևակերպումը պետք է իրականացվի ներկայացված առարկաները և փաստաթղթերը ստանալու վերաբերյալ արձանագրությամբ: Տվյալ արձանագրության մեջ, բացի արձանագրություններին ներկայացվող ընդհանուր պահանջներից, պետք է արտացոլում գտնեն քննիչին օբյեկտները ինքնակամ հանձնելու վերաբերյալ նշում, առարկաների և փաստաթղթերի ներկայացման նախաձեռնության և կամավորության փաստի և դրանք ստանալու վերաբերյալ հանգամանքների մասին նշումներ, պաշտպանի կողմից ներկայացվող օբյեկտի ծագումը, ինչպես նաև պաշտպանի միջնորդությունը՝ ներկայացվող օբյեկտը քրեական գործի նյութերին կցելու վերաբերյալ³:

Հետխորհրդային պետությունների քրեական արդարադատության համակարգում պաշտպանի կողմից ապացույցներ հավաքելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են հակասական կերպով: Առանձին պետություններում ձևականորեն հռչակվում է պաշտպանի կողմից ապացույց հավաքելու լիազորությունը, սակայն օրենսդրությամբ նախատեսված չէ պաշտպանի կողմից ապացույց հավաքելու դատավարական կարգը, դրա արդյունքներն ամրագրելու ձևը և այլն:

Ուսումնասիրելով տարբեր երկրների քրեական դատավարության օրենսգրքերը (ՌԴ, Մոլդովայի, Վրաստանի, ԱՄՆ)⁴ հետևություն ենք անում, որ պաշտպաններին տրված է ապացույցներ հավաքելու և ներկայացնելու իրավունքը, սակայն ընդհանրապես կարգավորված չէ պաշտպանի կողմից ապացույցների հավաքման և ներկայացման կարգը, հողվածով միայն ամրագրվում է նման իրավունքը, իսկ դրա իրականացման ընթացակարգն ընդհանրապես սահմանված չէ:

Պաշտպանների կողմից ապացույցների հավաքման և իրականացման ընթացակարգը սահմանված չէ նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

ՔԴՕ հողված 49-րդ սահմանված է պաշտպանի իրավունքները, որի մեջ ներառվում է նաև ձեռք բերելու և ներկայացնելու ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար, համաձայնության դեպքում հարցման ենթարկելու ֆիզիկական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից պահանջելու և ստանալու փաստաթղթեր կամ տեղեկություններ, եթե դրանք չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք և այլն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հողվածի 1-ին մասի 3-7-րդ կետերը սահմանում են՝ 1) իմանալու, թե ինչու է կասկածվում պաշտպանյալը, կամ ծանոթանալու նրան ներկայացված մեղադրանքին, ինչպես նաև մասնակցելու նրա հարցաքննությանը, 2) խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների սահմանափակման, բացառությամբ մեղադրյալի մասնակ-

² *Вишневецкая О.В.*, Состязательная деятельность защитника на предварительном следствии, Автореф.дисс. канд.юрид.наук. Ижевск, 2004, с. 21.

³ *Ямбаев Д.М.*, Участие защитника в собирании доказательств на стадии предварительного расследования. Автореф. дисс. канд. юрид. наук. Владимир, 2008, с. 22.

ցությամբ վարության զործողություններ կատարելու դեպքերի, 3) մասնակցելու իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած ապացուցողական կամ վարության այլ գործողության, մասնակցելու իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող ապացուցողական կամ վարության այլ գործողության, եթե դա չի վստահ այլ անձանց կամ արդարադատության շահերին, այլ դեպքերում քննիչի առաջարկով մասնակցելու ապացուցողական կամ վարության այլ գործողության, 4) մեղադրյալին պարզաբանելու նրա իրավունքները և պարտականությունները, 5) ապացուցողական կամ վարության այլ գործողություն իրականացնող անձի ուշադրությունը հրավիրելու նրա կողմից թույլ տրված օրենքի խախտման վրա, 6) ձեռք բերելու և ներկայացնելու ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար, 7) համաձայնության դեպքում հարցման ենթարկելու ֆիզիկական անձանց, որը, համեմատելով նախկին քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերի հետ, պարզ է դառնում, որ օրենսդրական փոփոխություններ են կատարվել, որով ընդլայնվել է պաշտպանի իրավունքները նախաքննության փուլում: Մասնավորապես՝ ապացույցներ հավաքելու, ձեռք բերելու և ներկայացնելու իրավունքը, ինչը սակայն օրենսդիրը չի կարգավորել, թե կոնկրետ ինչ ընթացակարգով է հնարավոր այն իրականացնել, և ինչ նշանակություն կարող է ունենալ քրեական վարույթի համար որպես պատշաճ ձեռք բերված ապացույցի:

Բացի ապացույցներ հավաքելու հարցում ինքնուրույն գործունեությունից՝ փաստաբանները կարող են մասնակցել քննչական մարմինների կողմից կատարվող քննությանը, հարցաքննություններին, ճանաչման ներկայացնելուն, խուզարկությունների կատարմանը, հանդես գալ միջնորդություններով՝ ապացույցներ ներկայացնելու վերաբերյալ:

ԱՄՆ-ի փորձը ցույց է տալիս, որ փաստաբանի ակտիվ գործունեությունը ոչ թե դանդաղեցնում, այլ ընդհակառակը՝ նպաստում է տեղեկատվության առավել արագ և ամբողջական հավաքմանը: Դատավարության սկզբնական փուլերում մրցակցության սկզբունքի կիրառմամբ պաշտպանը հնարավորություն է ունենում դատարանում օբյեկտիվ հիմնավորմամբ հակադրվել մեղադրողին և գործով ճշմարտությունը պարզելը դառնում է ավելին դյուրին: Ընդհակառակը, քննության փուլում պաշտպանի բացակայությունը կամ նրա ձևական մասնակցությունը կասկածի տակ է դնում նախնական քննության լրիվությունը և օբյեկտիվությունը⁴:

Անդրադառնալով ՀՀ-ում գործող քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներին, կարող ենք փաստել, որ պաշտպանության կողմը ի տարբերություն քննիչի չունի համապատասխան գործիքակազմ, հնարավորություններ կոնկրետ ապացույցներ հավաքելու և ներկայացնելու համար, որի արդյունքում խախտվում է մրցակցության սկզբունքը:

Քրեական դատավարության մեջ երկար ժամանակ գերիշխել է այն կարծրատիպը, որ նախնական դատական վերահսկողության ներքո գտնվող գործողություններ կատարելու միջոցով ապացույցներ կարող են հավաքել և այդ նպատակով դատարան միջնորդություն կարող են ներկայացնել բացառապես վարույթի հանրային մասնակիցները:

Դատավարագիտության մեջ առաջարկվում է օրենսդրությամբ ամրագրել դատարանի թույլտվությամբ որոշակի ապացույցներ հավաքելու նպատակով պաշտպանի՝ դատարան միջնորդություն ներկայացնելու իրավունք:

Այսպես, Մ. Բիտկովան նշում է, որ քրեադատավարական օրենսդրության մեջ անհրա-

⁴ Ясельская В. В., Деятельность адвоката-защитника по собиранию доказательств на стадии предварительного расследования, Автореф.дисс, канд.юрид. наук. Томск, 1999, с. 24.

Ժեշտ է ամրագրել նորմ, որով պաշտպանին հնարավորություն կտրվի նախնական քննության փուլում դատարան ներկայացնել միջնորդություն՝ պաշտպանի ներկայությամբ անձին դատարանի կողմից (դատարանում) հարցաքննելու վերաբերյալ, եթե վկան, ում պաշտպանը ցանկանում է հարցաքննել, չի կարող ներկայանալ դատական նիստին, քանի որ հեռու է բնակվում, ծանր հիվանդ է, կամ պետք է մեկնի երկրից: Այս դեպքում պաշտպանը հնարավորություն կունենա օգտագործել այդ վկայի ցուցմունքները՝ որպես ապացույց, քրեական գործի, ըստ էության, քննության ժամանակ⁵:

Գ. Սկրեբեցը նշում է, որ պաշտպանի կողմից տեղեկանքներ, բնութագրեր, այլ փաստաթղթեր պահանջելը չկատարելու դեպքում պաշտպանը պետք է իրավունք ունենա դիմելու դատարան միջնորդությամբ՝ իր պահանջած տեղեկանքները, բնութագրերը, այլ փաստաթղթերը իրեն տրամադրելու վերաբերյալ, նա պետ է իրավունք ունենա դիմելու դատարան միջնորդությամբ՝ դատական հարցման միջոցով մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ⁶:

Ինչպես նկատում ենք, գիտության և քրեադատավարական օրենսդրության զարգացման միտումները վկայում են այն մասին, որ պետք է ամրագրել և ընդլայնել պաշտպանի կողմից դատարան միջնորդություն ներկայացնելու և դատարանի թույլտվությամբ օրենքով ուղղակի նախատեսված ապացույցներ հավաքելու դեպքերը⁷:

Անդրադառնալով գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պաշտպանի իրավունքներին և այն համադրելով նախաքննության ընթացքում ապացուցման գործընթացին մասնակցելու հնարավորությանը՝ կարող ենք արձանագրել հետևյալը՝ Քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի, համաձայն ի թիվս այլի, պաշտպանն իրավունքի ունի համաձայնության դեպքում հարցման ենթարկելու ֆիզիկական անձանց, սակայն օրենսդրությամբ կարգավորված չէ այդ գործողության իրականացման ընթացակարգը, ինչպես նաև գործնականում հարց է բարձրացվում նաև կոնկրետ քրեական գործով արդեն պաշտոնապես հարցաքննված վկաներին և տուժողներին փաստաբանի կողմից հարցման ենթարկելու իրավաչափությունը:

Տեսության մեջ նշվում է, որ պաշտպանի կողմից վկաներին և տուժողներին հարցաքննելն իրավաչափ է⁸:

Պաշտպանի կողմից անձանց հարցման ենթարկելը կարելի է դիտել որպես արտադատավարական, ոչնչով չկարգավորված երկխոսություն՝ պաշտպանի և քրեական գործով ապացուցման առարկայի վերաբերյալ որոշակի տվյալների տիրապետող անձի միջև:

Տեսության մեջ և պրակտիկայում տարածված է այն մոտեցումը, որ անկախ նրանից, թե ինչպես են հարցման տվյալներն ամրագրվել և ձևակերպել, դրանք, արդեն ստացված լինելով պաշտպանի կողմից, ինքնին ապացույց չեն համարվում, քանի դեռ այդ տվյալներին տիրապետող անձը, որը գործին մասնակցում է որպես վկա, տուժող, մեղադրյալ քննիչի մոտ կամ դատարանում հարցաքննության ժամանակ ցուցմունք չի տվել:

Պրակտիկայում հանդիպում ենք դեպքեր, երբ պաշտպանն իր պաշտպանյալի անմե-

⁵ Биткова М. Ж., Право собирания доказательств защитником и его осуществление в уголовном судопроизводстве. Автореф. дисс. канд.юрид. наук., М., 2008, с 15.

⁶ Скребец Г. Г., Участие адвоката-защитника в формировании доказательств на стадии предварительного расследования. Автореф. дисс. канд. юрид. наук. Екантеринбург, 2008, с. 24.

⁷ Ղամբարյան Ա., «Ապացուցման գործընթացում պաշտպանի կարգավիճակի կատարելագործման ուղիները ՀՀ-ում», Երևան 2015, էջ 20:

⁸ Героев А. Д., Участие адвоката защитника в доказывании на предварительном следствии. Автореф.дисс. канд. юрид.наук, М., 2004.

ղության հիմնավորման կամ ընդհանրապես քրեական վարույթի համակողմանի քննության ապահովման նկատառումներից ելնելով, ֆիզիկական անձի համաձայնության հիման վրա հարցման է ենթարկում անձին, և տվյալ հարցաքննության արձանագրությունը ներկայացնում է վարույթն իրականացնող մարմնին՝ միջնորդելով այն ճանաչել որպես արտավարությանին փաստաթուղթ կամ հարցման ենթարկված անձին հրավիրել հարցաքննության որպես վկա: Առաջադրել նաև այն հարցերը, որոնց շուրջ հարցաքննվել է հարցման ենթարկված անձը, սակայն շատ դեպքերում վարույթն իրականացնող մարմինները մերժում են, որից կարելի է հետևություն անել, որ թեև քրեադատավարական առումով հնարավորություն է ընձեռնված պաշտպանին հարցման ենթարկելու ֆիզիկական անձին, սակայն այն շատ դեպքերում չի կարող ծառայել իր իսկ նպատակին, որի արդյունքում ստացվում է՝ պաշտպանի նման լիազորությունը ձևական է, և դրա հետևանքով էլ կարող է խախտվել քրեական դատավարության սկզբունքները:

Պաշտպանի կողմից անձանց հարցման ենթարկելու հարաբերությունները, դրանց արդյունքների ձևակերպման կարգը պետք է ստանան հստակ կարգավորում:

Ինչ վերաբերվում է հարցման արդյունքները քրեական դատավարությունում որպես ապացույց օգտագործելու մեխանիզմներին, ապա, որպես այդպիսիք, բացի քննիչի կողմից հարցման ենթարկված անձին հարցաքննելը, կարելի է օգտագործել պաշտպանի ստացած տեղեկատվության օրինականացման այնպիսի միջոց, ինչպիսին է ցուցմունքների դեպոնացումը դատարանում: Բանն այն է, որ հայկական իրականության մեջ նախաքննության մարմինները դեռևս աչքի են ընկնում մեղադրական հակումով և ոչ միշտ է, որ հետաքրքրված են քրեական վարույթի համակողմանի քննությամբ: Հարցման ենթակա անձանց ցուցմունքների դատական դեպոնացումը նպատակահարմար է կիրառել այն դեպքերում, երբ պաշտպանը գտնում է, որ հնարավոր չի լինի ապահովել վկայի՝ դատարան ներկայանալը և հարցաքննելը, քանի որ առկա են հիմքեր ենթադրելու, որ վկայի նկատմամբ սպառնալիքները կամ դատարան ներկայանալու անհնարինությունը պայմանավորված են վկայի տարիքով կամ առողջական վիճակով, մյուս կողմից պաշտպանն իրավունք ունի հարցման ենթարկել տուժողին՝ որպես ֆիզիկական անձի, ինչը պրակտիկայում չենք հանդիպում: Հարկ է նշել նաև այն, որ արդյոք պաշտպանի կողմից տուժողին հարցման ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը կարող է նշանակություն ունենալ քրեական վարույթն իրականացնող մարմնի համար և կարող է այն հետագայում՝ քրեական դատավարության սահմանված կարգով օգտագործել որպես թույլատրելի ապացույց:

Ի տարբերություն նախկին օրենսգրքի՝ պաշտպանն այսուհետ կարող է վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ներկայացնել ապացույցներ, այլ ոչ թե նյութեր: Դա նշանակում է, որ մեղադրյալն այլևս պարտավոր չէ մինչդատական վարույթում քննիչին միջնորդություն ներկայացնել այս կամ այն առարկան կամ փաստաթուղթն ապացույց ճանաչելու համար: Ներկայացնելու պահից դրանք համարվում են ապացույց, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում հակառակը չի հաստատվել: Մինչդատական վարույթում, որպես այս իրավունքի իրականացման երաշխիք, նախատեսված է քննիչի կողմից կատարվող նոր քննչական գործողություն՝ առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը (ՔԴՕ հոդված 233):

Եզրակացություն

Նախաքննության ընթացքում պաշտպանն իրավունք ունի ձեռք բերելու և ներկայացնելու ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար:

Ապացույցները հավաքվում են քրեական վարույթի ընթացքում՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողությունների կատարման միջոցով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով՝ օտարերկրյա իրավասու մարմինների կողմից համապատասխան գործողությունների կատարման միջոցով (ՔԴՕ հոդված 103):

ՔԴՕ-ի 86-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթում ապացույցներ են ձեռք բերվելու և օգտագործվելու, մեղադրյալի ցուցմունքը, տուժողի, վկայի փորձագետի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, կարծիքը, իրեղեն ապացույցները, ապացուցողական և վարույթային այլ գործողությունների արձանագրությունները:

Պաշտպանը քրեադատավարական առումով լիազորված է ձեռք բերել ապացույցներ և ներկայացնել վարույթին իրականացնող մարմնին, սակայն արդյոք ներկայացված ապացույցները թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ կարող են համարվել ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատությանը արձանագրել է հետևյալը՝ ապացույցների թույլատրելիության հատկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.

- աղբյուրի օրինականություն, ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից,

- ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

- դատավարական ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

- լիազորված սուբյեկտ՝ այն պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:

Վերաբերելիությունն ապացույցի կարողությունն է իր բովանդակությամբ ծառայելու ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները, գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող այլ տվյալները բացահայտելուն և հաստատելուն: Այլ խոսքով՝ ապացույցի վերաբերելիության հատկանիշն արտացոլում է ապացույցի և գործի քննության ու լուծման համար նշանակություն ունեցող փաստի մասին:

Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերվում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

Ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները, (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահուլու, վերարտադրու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,
դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:

Ամփոփելով նշվածը՝ հետևություն ենք անում, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է և հնարավորություն է ընձեռվել քրեական վարույթին ներգրավված պաշտպաններին ձեռք բերելու և ներկայացնելու ապացույցներ, սակայն բաց է այն, որ որևէ կերպ կարգավորված է տվյալ ապացույցների ձեռքբերման իրավական ընթացակարգը, ինչպես նաև հետագայում այն որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը, որից ելնելով առաջարկում ենք կատարել խորն ուսումնասիրություն՝ այն համադրել պրակտիկայում առաջացած խնդիրների հետ և ստեղծել նոր օրենսդրական փոփոխություններ:

Ամփոփագիր: Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները:

Ամփոփելով պաշտպանի քրեադատավարական առումով տրված լիազորությունները՝ կարծում ենք, որ պաշտպանի կողմից ձեռք բերված ցանկացած ապացույց թույլատրելիության, արժանահավատության, վերաբերելիության տեսանկյունից պատշաճ են և պետք է հիմք ընդունվի նախաքննության մարմնի կողմից քրեական վարույթով նախաքննության ընթացքում վերջնական որոշում կայացնելիս, սակայն մյուս կողմից օրենսդրական բաց է այն, որ քրեական վարույթով ներգրավված վկայի և տուժողին մասնավոր հարցման ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը, որը բովանդակային առումով կարող է հակասական լինել նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված ցուցմունքների բովանդակությունից, արդյոք պատշաճ ապացույց է, թե՛ ոչ:

Օրենքով առկա է բաց նաև պաշտպանի կողմից ապացույցներ ձեռք բերելու դատավարական կարգը, միջոցներն ու եղանակները:

Կարևոր է ընդգծել և առաջ քաշել օրենսդրական այն բացը, որ կոնկրետ քրեական վարույթի նախաքննության ընթացքում պաշտպանի կողմից ներկայացրած միջնորդությունները, որոնք ուղղված կլինի ապացույց ձեռք բերելուն կամ արդեն իսկ ձեռք բերված ապացույցը քրեական վարույթին կցելու մասին, ևս կարգավորված չէ, ըստ էության՝ այն վարույթն իրականացնող մարմնի համար հայեցողական է, որի արդյունքում կարող է խախտվել մեղադրյալի պաշտպանության իրավունքը, որից էլ խուսափելու համար առաջարկվում է քրեական դատավարության օրենսգրքում ներառել նորմ, որով վարույթն իրականացնող մարմնի համար որոշակի հանգամանքների և օրենսդրական պահանջների, և/կամ հիմնավորված ու քրեական վարույթով վերջնական որոշում կայացնելու համար էական նշանակություն ունեցող միջնորդությունները՝ ապացույցներ ձեռք բերելու կամ ձեռք բերված ապացույցները կցելու մասին, լինեն պարտականություն և ընդգրկվեն մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակի մեջ:

Annotation. Each piece of evidence, from the point of view of reliability, must be assessed in the totality of all the evidence presented with a comprehensive and detailed assessment of the sources of factual data and prove the entire process of constructing evidence. The final decision on the reliability of evidence can be made as a result of comparing its content with information from other sources. In order to assess the reliability of a certain fact obtained from one source or another, it is necessary to analyze the content of the information received, compare it with other evidence, find out

their compliance or contradiction, and in case of contradiction, identify the reasons for the discrepancy. Summarizing the powers granted to the defense attorney in criminal procedure, we come to the conclusion that any evidence obtained by the defense attorney is proper in terms of admissibility, reliability, relevance and should be used as the basis for the preliminary investigation by the investigating authority when making a final decision during the preliminary investigation in criminal proceedings, but on the other hand, there is a legislative gap, which consists in the fact that the protocol of private interrogation of the witness and victim participating in the criminal process may contradict the content of the testimony obtained by the inquiry authority, and in this case, are they proper evidence or not?

The procedural order and methods of obtaining evidence by the lawyer are also a legislative gap.

It is important to emphasize and highlight the gap, which consists in the fact that the motions filed by the defense attorney during the preliminary investigation of a specific criminal case, which will be aimed at obtaining evidence or attaching already obtained evidence to the criminal process, are also not regulated, and are actually implemented at the discretion of the body conducting the proceedings, as a result of which the defendant's right to defense may be violated, and in order to avoid this, it is proposed to include in the Criminal Procedure Code a norm according to which motions to obtain or attach obtained evidence, certain circumstances and requirements of the law and / or justified and essential for making a final decision are an obligation and should be included in the scope of judicial guarantees of the legality of pre-trial proceedings.

Аннотация. Каждое доказательство, с точки зрения достоверности, должно быть оценено в совокупности всех предъявленных доказательств со всесторонней и подробной оценкой источников фактических данных, и должно доказывать весь процесс построения доказательств. Окончательное решение о достоверности доказательств можно принять вследствие сопоставления их содержания с информацией из других источников. Чтобы оценить достоверность определенного факта, полученного из того или иного источника, необходимо проанализировать содержание полученной информации, сравнить ее с другими доказательствами, выяснить их соответствие или противоречие, и в случае противоречия, выявить причины несоответствия.

Обобщая полномочия, предоставленные защитнику в уголовно-процессуальном порядке, приходим к выводу, что любые доказательства, полученные защитником, являются надлежащими с точки зрения допустимости, достоверности, относимости, и должны быть органом расследования положены в основу предварительного следствия при принятии окончательного решения в ходе предварительного расследования в уголовном процессе. Но с другой стороны, существует законодательный пробел, заключающийся в том, что протокол частного допроса участвующих в уголовном процессе свидетеля и потерпевшего, может по содержанию противоречить показаниям, полученными органом дознания. В данном случае являются ли они надлежащими доказательствами или нет?

Законодательным пробелом также являются процессуальный порядок и способы получения доказательств адвокатом.

Важно подчеркнуть и выделить пробел, заключающийся в том, что ходатайства, подаваемые защитником в ходе предварительного следствия по конкретному уголовному делу, которые будут направлены на получение доказательств или приобщение уже полученных доказательств к уголовному процессу, также не урегулированы, и фактически реализуются по усмотрению органа, ведущего производство, в результате чего право подсудимого на защиту может быть нарушено. Во избежание этого предлагается включить в Уголовно-процессуальный кодекс норму, согласно которой ходатайства о получении или прикреплении полученных доказательств, определенных обстоятельств и требований закона и/или обоснованных и существенных для принятия окончательного решения являются обязанностью и должны быть включены в сферу судебных гарантий законности досудебного производства.

Բանալի բառեր - *ապացույցների գնահատում, պաշտպանի իրավունքներ, բացառիկ լիազորություն, պաշտպանական ապացույցներ:*

Keywords: *assessment of evidence, rights of the defense attorney, exclusive powers, defense evidence.*

Ключевые слова: оценка доказательств, права защитника, исключительные полномочия, доказательства защиты.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղանբարյան Ա., «Ապացուցման գործընթացքում պաշտպանի կարգավիճակի կատարելագործման ուղիները ՀՀ-ում», Երևան, 2015, էջ 20:
2. Милова И. Е., Участие адвоката-защитника в собирании доказательств на предварительном следствии. Автореф. дисс... канд.юрид.наук, Самара, 1998.
3. Вишневская О. В., Состязательная деятельность защитника на предварительном следствии. Автореф. дисс... канд. юрид. наук. Ижевск, 2004, с. 21.
4. Ямбаев Д. М., Участие защитника в собирании доказательств на стадии предварительного расследования. Автореф. дисс... канд. юрид. наук Владимир, 2008, с. 22.
5. Ясельская В.В., Деятельность адвоката-защитника по собиранию доказательств на стадии предварительного расследования. Автореф.дисс... канд.юрид. наук Томск, 1999, с. 24.
6. Биткова М. Ж., Право собирания доказательств защитником и его осуществление в уголовном судопроизводстве. Автореф. Дисс.... канд. юрид. наук., М., 2008, с. 15.
7. Скребец Г. Г., Участие адвоката-защитника в формировании доказательств на стадии предварительного расследования. Автореф. дисс. канд. юрид. наук, Екантеринбург, 2008, с. 24.
8. Героев А. Д., Участие адвоката защитника в доказывании на предварительном следствии. Автореф.дисс... канд.юрид.наук., М., 2004.

Ավագյան Ի. - «Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան, «Գլաձոր» համալսարանի հայցորդ, էլիասցե՝ ingaavagyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 05.09.2024 թ., տրվել է գրախոսության 05.09.2024 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 20.01.2025 թ.: